ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14.12.2016թ.

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբեր 2016թ. N27

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.12.2016Թ. ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇԵՑ՝

ՀԱՍՏԱՏԵԼ 14.12.2016Թ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ.

1. ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. 2017Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ և ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ և ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ և ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2017Թ-Ի ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Լ. Ավոյան
2. Լ. Պետրոսյան
3. Հ. Հակոբյան
4. Գ. Սարգսյան
5. Ի. Սահակյան
6. Ա. Հակոբյան
7. Յու. Մկրտչյան
8. Ա. Ֆախուրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14.12.2016թ.

ՈՐՈՇՈՒՄ N28

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

2016թ-ի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Վարչական բյուջեի եկամտային մասում տեղական տուրքերի չափը պակասեցնել 76000 դրամի չափով, որից շինության թույլտվության գծով 20000դրամ, իսկ ոգելից խմիչքի և ծխախոտի թույլտվության գծով համապատասխան 32000դրամ և 24000դրամ:

2. Ծախսային մասում 09.01.01.51 նախադպրոցական ուսուցում գ.ծ դասակարգման 4239 հոդվածից պակասեցնել 76000 դրամ:

3. Վարչական բյուջեի ծախսային մասում 01.01.01.51 (կառավարման մարմնի պահպանում) 4111 աշխատավարձ հոդվածից 1900000դրամ տեղափոխել նույն դասակարգման 4112 պարգևատրումներ հոդվածին համայնքապետարանի աշխատակազմին պարգևատրելու համար:

4. 09.01.01.51 գ.ծ դասակարգման 4239 հոդվածից 1180000 դրամ տեղափոխել որից՝

ա) 08.02.04.51 գ.ծ դասակարգման մշակույթային միջոցառումների իրականացում 4269 հոդվածին (հատուկ նպատակային նյութեր) միջոցառումների ժամանակ տոնական լուսավորության համար անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու նպատակով 400000դրամ:

բ) 10.07.01.54 (սոցիալական անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ նպաստներ) հոդվածին համայնքի կարիքավոր ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար 300000դրամ:

գ) 09.01.01.51 գ.ծ դասակարգման (արտադպրոցական ուսուցում) 4239 հոդվածին հատկացնել 480000դրամ: Երաժշտական դպրոցի պարի խմբի աշակերտներին պարի հագուստներ ձեռք բերելու համար:

1. Լ. Ավոյան
2. Լ. Պետրոսյան
3. Հ. Հակոբյան
4. Գ. Սարգսյան
5. Ի. Սահակյան
6. Ա. Հակոբյան
7. Յու. Մկրտչյան
8. Ա. Ֆախուրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14.12.2016թ.

ՈՐՈՇՈՒՄ N29

2017Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ և ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18-րդ կետի պահանջներով Քաղցրաշեն համայնքի ավագանին

Որոշեց

Հաստատել Քաղցրաշեն համայնքում 2017թ-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տրամադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել է հիմնական օբյեկտների համար՝ կիրառելով 0,5 գործակից.

1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար յոթ հազար հինգ հարյուր դրամ:

2) սյուն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տասնհինգ հազար դրամ

բ) 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ

գ) 1001–ից 3000քմ քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար քսանհինգ հազար դրամ

դ) 3001քմ ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես օբյեկտների համար հիսուն հազար դրամ

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

ա) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մեկ հազար հինգ հարյուր դրամ

բ) 20 և ավելի քմ ընդհանուր մակեես ունեցող օբյեկտների համար երկու հազար հինգ հարյուր դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վրակառուցման, ուժեղացման, վերանորոգման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծով

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր

շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը է օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

դ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտայի չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխությունների, ապա այն համարվում է նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել երկու հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակ համար՝

ա. Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 3000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 4000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 5000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 6000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 7000 դրամ,

զ. 501-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 10000 դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 2000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 3000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 4000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 5000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 6000 դրամ,

զ. 501-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեմքում՝ 10000 դրամ,

5. Համայնքի տարածքում՝

ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքերը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 300դրամ 1քմ-ի համար:

բ. հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքերը սահմանել 150000 դրամ:

գ) խանութներում, կրպակներում,հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայություն օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել 30000 դրամ.

դ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել `

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ,

զ. 501-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

զ. 501-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների, բաղնիքների (սաունաների), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա) առևտրի օբյեկտի համար՝ 30000դրամ

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 70000դրամ

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 300000դրամ

դ) խաղատների կազմակերպման համար՝ 700000դրամ

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300000դրամ

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 120000դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 5000 դրամ

10. Մրցություններ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել մեկ հազար դրամ:

11. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերի հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ չորս հազար դրամ:

1. Լ. Ավոյան
2. Լ. Պետրոսյան
3. Հ. Հակոբյան
4. Գ. Սարգսյան
5. Ի. Սահակյան
6. Ա. Հակոբյան
7. Յու. Մկրտչյան
8. Ա. Ֆախուրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14.12.2016թ.

ՈՐՈՇՈՒՄ N30

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ և ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 26-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, մանկապարտեզի և երաժշտական դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը (հավելված 1,2,3)

1. Լ. Ավոյան
2. Լ. Պետրոսյան
3. Հ. Հակոբյան
4. Գ. Սարգսյան
5. Ի. Սահակյան
6. Ա. Հակոբյան
7. Յու. Մկրտչյան
8. Ա. Ֆախուրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14.12.2016թ.

ՈՐՈՇՈՒՄ N31

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետով ավագանին

Որոշեց

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ նշանակության հողերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համար՝ մեկնարկային գինը սահմանել յուրաքանչյուր հողակտորի համար հողի հարկի տարեկան դրույքաչափին հավասար:

1. Լ. Ավոյան
2. Լ. Պետրոսյան
3. Հ. Հակոբյան
4. Գ. Սարգսյան
5. Ի. Սահակյան
6. Ա. Հակոբյան
7. Յու. Մկրտչյան
8. Ա. Ֆախուրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14.12.2016թ.

ՈՐՈՇՈՒՄ N32

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ և ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2017Թ-Ի ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Մանկապարտեզ հաճախող մեկ երեխայի համար ամսեկան վարձը (ծնողական գումար) սահմանել 5000դրամ: Մի ընտանիքից երկու և ավելի երեխաների համար՝ առաջին երեխային համար սահմանել 5000դրամ, հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար 3000 դրամ:

Երաժշտական դպրոց հաճախող մեկ երեխայի համար՝ 3000դրամ, երկու և ավել երեխաների համար առաջին երեխային համար սահմանել 3000դրամ, հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար 2500 դրամ:

1. Լ. Ավոյան
2. Լ. Պետրոսյան
3. Հ. Հակոբյան
4. Գ. Սարգսյան
5. Ի. Սահակյան
6. Ա. Հակոբյան
7. Յու. Մկրտչյան
8. Ա. Ֆախուրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Հավելված 1
14.12.2016թ. կայացած Քաղցրաշեն
համայնքի ավագանու N 30 որոշման

ՔԱՂՑՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՇԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2017թ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 20
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/
Համայնքի ղեկավար	1	230000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	180000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	170000
Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (2.3-1), (2.3-2)	2	168000
Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (3.1-1)(3.1-2)	2	105000
Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-1)	1	104000
Համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (3.3-1)	1	103000
ընդամենը		1333000
Քաղաքացիական աշխատանք		
Մշակույթի տան տնօրեն	1	80000
Գրադարանավար	1	85000
Գործավար	1	95000
Հարկահավաք	1	100000
Տեխսպասարկման անձնակազմ		
Փականագործ,պարտիզպան	1	78000
Պահակ	1	78000
Հավաքարար	2	73000
Կատարածու	1	73000
Աղբահավաք վարորդ	1	108000
Գերեզմանոցի պահակ	1	73000
Ընդամենը	20	2249000

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14.12.2016թ.

ՈՐՈՇՈՒՄ N33

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Քաղցրաշեն համայնքի 2017թ բյուջեն

2017թ վարչական բյուջեի եկամուտները

Եկամտատեսակները

Ընդամենը եկամուտներ այդ թվում	69504,8 հազ. դրամ
1.Հարկեր և տուրքեր այդ թվում	21198,0 հազ. դրամ
1/1. Գույքային հարկեր անշարժ գույքից այդ թվում	15800,0 հազ. դրամ
Գույքահարկ շենքի և շինությունների, որից	600,0 հազ. դրամ
Ֆիզիկական անձանց	400,0 հազ. դրամ
Իրավաբանական անձանց	200,0 հազ. դրամ
Հողի հարկ, այդ թվում	15200,0 հազ. դրամ
Ֆիզիկական անձանց	15000,0 հազ. դրամ
Իրավաբանական անձանց	200,0 հազ. դրամ
Գույքահարկ փոխադրամիջոցներից	5200,0 հազ. դրամ

Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար 198,0 հազ. դրամ
այդ թվում
Տեղական տուրքեր, որից 198,0 հազ. դրամ
Շինությունների շինարարության թույլտվության համար, որից 30,0 հազ. դրամ
Հիմնական շինությունների համար 15,0 հազ. դրամ
Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն 15,0 հազ. դրամ
Ծխախոտի վաճառքի թույլտվություն 96,0 հազ. դրամ
Խմիչքների իրացման թույլտվություն 72,0 հազ. դրամ
Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում 44591,8 հազ. դրամ
Ընթացիկ ներքին դրամաշնորհներ / դոտացիաներ/ 42724,6 հազ. դրամ
Նպատակային հատկացումներ/սուբվենցիա/ 1867,2 հազ. դրամ
Այլ եկամուտներ, այդ թվում 3715,0 հազ. դրամ
Գույքի վարձակալությունից մուտքեր, որից
Հողերի վարձակալություն 3200,0 հազ. դրամ
Գույքի Վարձակալություն 25,0 հազ. դրամ
Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այդ թվում 490,0 հազ. դրամ
Այլ եկամուտներ 10,0 հազ. դրամ
Ծախսային մաս- 69504,8 հազ. դրամ որից՝
1.հոդված 4111 աշխատավարձ- 27000,0 հազ. դրամ՝ կառավ. ապարատ
2.հոդված 4212 էներգետիկ ծառ-ն -կառավ ապարատ՝ 3100,0 հազ.դրամ,որից 1400.0 հազ. դրամ Էլեկրոներգիա, 1700,0 հազ. դրամ գազ
3.հոդված 4113կոմ. ծառ-ն - 320,0հազ. դրամ՝ կառավ ապարատ, որից խմելու ջուր 278.0 հազ. դրամ, դեռատիզացիա 42,0 հազ. դրամ
4. հոդված 4214 կապի ծառ-ն - 300,0հազ. դրամ՝ կառավ. ապարատ(հեռախոս 100հազ. դրամ, ինտերնետ կապ - 200.0 հազ. դրամ)
5. հոդված 4221 զործուղում - 50,0հազ. դրամ՝ կառավարման ապարատ
6.հոդված 4234 տեղեկ. ծառ-ն -450,0հազ. դրամ՝ (թերթեր, ամսագրեր)

7.հոդված 4232 համակարգչային ծառ-ն – 200,0 հազ. դրամ(կայք, բազա)

8.հոդված 4239 ընդհ. բնույթի այլ ծառ-ն -10600,0հազ. դրամ մանկապարտեզ

-11700,0հազ. դրամ երաժշ. դպրոց

- 1000,0 հազ. դրամ տոնական միջոց.

- 200,0 հազ. դրամ թատրոնի ծառ.

-150,0 հազ. դրամ հեռ. հաղորդումներ

9.հոդված 4241 - 500.0 հազ. դրամ՝ գույքի իրավունքի պետ. գրանցման համար /կադաստր/

10.հոդված 4261 գրասեն. նյութեր - 180,0հազ. դրամ՝ կառավ. ապարատ՝ թղթեր, գրքեր, գրեն. պիտույքներ, քսերոքսի լիցքավորում, նորոգում և այլն:

11. հոդված 4264 – 400,0 հազ. դրամ տրանսպորտային նյութերի (վառելիքների ձեռք բերում) համար

12.հոդված 4269 հատուկ նպատ. նյութեր - 1000,0հազ.դրամ՝ նվերների ձեռքբերման համար

- 200,0հազ. դրամ աշ. պայուսակների համար

13. հոդված 4267 տնտ. նյութեր – 80,0հազ. դրամ մաքրիչ նյութերի համար

14.հոդված 4637 ընթ. դրշ-ն պետ և ՀՈԱԿ-ին -250,0հազ. դրամ՝ դպրոցին անապահով ընանիքների աշակերտներին դասագրքերի ձեռք բերման համար

15. հոդված 4239 ընդհանուր բնույթի այլ ծառ.– 400,0հազ. դրամ՝ սգո պարագաների ձեռք բերում /ծաղկեպսակներ, սգո պարագաներ և այլ ծառ./

16. հոդված 4819 նվիրատ. այլ շահ. չհետ. կազմ-ին – 400.0 հազ. դրամ

17. հոդված 4235 – 300.0 հազ. դրամ գույքի գնահատման և աուդիտ ծառ.

18. հոդված 4729 այլ նպաստներ – 2712,0 հազ. դրամ՝ օգնություն անապահով և կարիքի մեջ գտնվող ընտանիքներին, ՀՄ պատերազմի և Արցախի ազատամարտին մասնակցած մարտիկներին դրամակն նպաստ տալու մասին:

19. հոդված 4822 այլ հարկեր – 30.0 հազ. դրամ՝ տեխստուգայցի համար

20.հոդված 4823 պարտադիր վճարներ – 100,0 հազ. դրամ/պետ տուրքեր,բնապահպան վճարներ/

21. հոդված 4215 աղբահան ավտոմեքենայի ապահովագրություն – 40,0 հազ. դրամ

22.հոդված 4726 հուղարկավորության նպաստ – 1500,0 հազ. դրամ

23.հոդված 4239 – 275,0 հազ. դրամ, որից 250,0 հազ. դրամը հակակարկտային ծառայության համար 25.0 հազ դրամը գյուղ մթերքների բուժ սանիտարիայի ոլորտի խորհրդատվակ. ծառ. համար

24. հոդված 4819 համայնքների անդամություն – 70,0 հազ. դրամ

25. հոդված 4241 հակահիդեհային ծառայություն, զազասպառման համակարգի սպասարկման համար - 110,0 հազ. դրամ

26.հոդված 4511 – 1867,2 հազ. դրամ երաժշտական դպրոցին ազգային, լարային և փողային նվագարանների պահպանման համար:

28. հոդված 4727 – 500,0 հազ. դրամ սպորտային, կրթության և գիտության բնագավառում աչքի ընկած մարդկանց պարգևատրելու համար

29. հոդված 4891 վարչ.բ. պ.ֆ. – 3520,6 հազ. դրամ:

Ֆոնդային մաս

1.Ֆոնդային բյուջեի եկամտային մասում հողի օտարումից մուտքերը պլանավորել 60 մլն. դրամ

2.Ֆոնդային բյուջեի ծախսային մասում

ա) 09.08.01.55 գ.ծ դասակարգման (կրթություն այլ դասին չպատկանող) 5113 (շենք և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին հատկացնել 12մլն. դրամ մանկապարտեզի դռները և պատուհանների հիմնանորոգման համար

բ) 08.05.01.55 գ.ծ դասակարգման (հանգիստ, մշակույթ և կրոն) 5112 (շենք և շինությունների կառուցում) հոդվածին հատկացնել 22մլն. դրամ եկեղեցու բակի բարենորոգման աշխատանքների համար:

գ) 06.04.01.52 գ.ծ դասակարգման (արտաքին լուսավորության ցանցի պահպանում և շահագործում) 5112 հոդվածին 8 մլն. դրամ:

դ) 01.01.01.51 գ.ծ դասակարգման 5113 հոդվածին հատկացնել 15մլն. դրամ համայնքապետարանի գրասենյակի հիմնանորոգման աշխատանքների համար:

ե) պոհուստային ֆոնդ 3 մլն. դրամ:

1. Լ. Ավոյան կողմ
2. Լ. Պետրոսյան կողմ
3. Հ. Հակոբյան կողմ
4. Գ. Սարգսյան կողմ
5. Ի. Սահակյան կողմ
6. Ա. Հակոբյան կողմ
7. Յու. Մկրտչյան կողմ
8. Ա. Ֆախուրյան կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Հավելված 2
14.12.2016թ կայացած Քաղցրաշեն
համայնքի ավագանու N 30 որոշման

ՔԱՂՑՐԱՇԵՆ ի «ԱԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2017թ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 14

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/
1	2	3
Տնօրեն	1	150000
Դաստիարակ (3)	1.5	146000
Դաստիարակ(2)	1.5	156000
Դաստ. օգնական(1)	1	156000
Դաստ. օգնական(1)	1	146000
Բուժքույր	0.5	146000
Խոհարար	1	146000
Հաշվապահ	0.5	146000
Տնտեսվար	0.5	146000
Դռնապահ	1	73000
Պահակ	1	78000
ընդամենը		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Հավելված 3
14.12.2016թ կայացած Քաղցրաշեն
համայնքի ավագանու N 30 որոշման

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏ. ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2017թ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 14

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/
1	2	3
Երաժշտական դպրոցի տնօրեն	1	100000
Ուսուցիչներ (8)	8.6	70822
Ուսուցիչներ (3)	5.2	66138
Հաշվապահ	1	70822
Հավաքարար	1	70822
Ընդամենը		1174630

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ